

ումեք յուխտե եկեղեցւոյն Լատինաց, զո՛ր եւ ունիցին աստիճան, լիցի իշխանութիւն ընդ բանիւ առնել կամ զինքն կամ զիրսն, եւ կամ զԼատինս բնակեալս յերկրի իւրում. եւ զի վաւերական կոնդակաւ յայտ արասցէ զայս: Միանգամայն խնդրէր մի՛ յապաղել զառաքումն օգնութեան արեւմտեայցն Խաչակրաց՝ ՚ի դէպ ժամուն, յորում այլազգիք երկպառակեալ կռուէին ընդ իրեարս, զի յետ միաբանելոյ նոցա՝ անհնարին ասէր քրիստոնէից բաւել զդէմ ունել նոցին: Գրեաց եւ կաթողիկոսն Գրիգոր Ապիրատ երկար թուղթ, յաւետ կրօնական, շնորհ ունելով Քահանայապետին վասն պատուելոյն առաքելական դրօշու զթագաւոր իւրեանց, զոր միշտ *Յաղթող* կոչեն եւ ինքն¹⁴⁰ եւ որ յաջորդեացն զնա Յովհաննէս արքեպիսկոպոս Ստյ¹⁴¹. զի եւ սա առաքէր թուղթ ՚ի ձեռն նոյն դեսպանի, պատրաստական ցուցանելով զինքն ՚ի կամս եւ ՚ի հրամանս Քահանայապետին, եւ խնդրէր ՚ի նմանէ զպալիումն պատուական, զմիթր եւ զմատանի, որովք օրհնեսցէ եւ արձակեսցէ զզինուորեալսն ընդ թագաւորին՝ ընդդէմ այլադէնիցն¹⁴²:– Պատասխանիք թղթոց երեցուն եւս մերայոցս՝ տուեալ են ՚ի Քահանայապետէն յետ ուր ամսոց, այսինքն յամսամտին յունիսի 1202 ամի, եւ ըստ իւրաքանչիւր խնդրոյ շնորհեալ եւ հաճեցուցեալ զնոսա, աւետէ զհաւաքումն Խաչակրացն արեւմտեայց ՚ի Վենետիկ, ուստի անցցեն յարեւելս, եւ զի ընդ նոսա զան երկոքին նուիրակք իւր կարդինալք, *Սոփրեստոս*¹⁴³՝ եկեղեցւոյն Ս. Պրաքսիդեայ, եւ *Պետրոս*՝ Ս. Մարկելլու. յապահովէ եւ զԼեւոն հաճոյական բանիւք՝ զի մի՛ ոք կարասցէ ընդ բանիւ առնել զիրսն՝ բայց ինքն միայն կամ նուիրակ իւր առանձինն հրամանաւ իւրով¹⁴⁴:– Բազում ամսօք եւս յետ գրութեանն հասին թուղթքն առ Հայս. եւ ՚ի տարեկան յայսմ միջոցի, որպէս բազմաց կարծի՝ մեռեալ էր ծերն Պեմունդ Գ (1201), յետ երկար՝ յիսուններկու ամաց՝ իշխանութեանն. եւ որդւոյ նորա կոմսին՝ համարձակագոյն եւս յաւակնեալ այնուհետեւ առ ոտն հարկանել զղաշինսն, բռնանայր ՚ի վերայ

¹⁴⁰ Certissime scimus ... quia diligitis in Christo nostrum dilectum filium *Leonem Triumphantem*, Regem Armeniæ.

¹⁴¹ Թուղթք Իննովկենտեայ, Ե, ԽԲ. ԽԴ:

¹⁴² Թուղթք Իննովկենտեայ, Ե, ԽԴ. ԽԷ:

¹⁴³ Սոփրեստոս յազնիւ տոհմէ Սոփրեստեայ Պիստոյայ քաղաքի Իտալիոյ, ընկալեալ էր զծիրանին յամի 1182 եւ † ՚ի 1210:

¹⁴⁴ Թուղթք Իննովկենտեայ, Ե, ԽԳ: